

3 ՕԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ 5 ՇՐՋԱՆՆԵՐ 3 ANOINTINGS AND 5 SEASONS

2 ԹԱԳ. 2:1-4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որոշ անուններ հիշելու համար:

- **Չեբուսթէն** – թագավորում է (Սավուղի որդին)
- **Աբեններ** (Սավուղի հորեղբայրը) սպանում է Ասայէլին:
- **Յովաբն** սպանում է Աբեններիին: (Յովաբը Դավիթի քրոջ տղան)
- **Բաանան՝** եւ **Ռեքարը** սպանում են Չեբուսթէն

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

2 Թագ. 2:1-2 - 1 Դրանից հետո (Սիկեւակ) Դավիթը հարց տալով Տիրոջը՝ ասաց. «Արդեօք գնամ Հուդայի քաղաքներից որևէ մէկը»: Տէրն ասաց նրան. «Գնա՛»: Դավիթն ասաց. «Ո՛ր գնամ»: 2 Տէրն ասաց՝ «Հեբրոն»: Դավիթն իր երկու կանանց՝ հեզրայէլացի Աքինովամի և կարմեղացի Նաբադի կին Աբիգեայի հետ եկավ Քեբրոն: 3 Դավիթն իր հետ եկած մարդկանց, ամէն մէկին իր ընտանիքով բերեց, և նրանք բնակվեցին Քեբրոն քաղաքում:

4 Եկան Հրէաստանի մարդիկ և այնտեղ Դավիթին Հուդայի տան վրա թագավոր օծեցին:

11 Քեբրոնում, Հուդայի երկրի վրա Դավիթը թագավորեց եօթը տարի վեց ամիս:

2 Թագ. 5:3 - 3 Եւ Իսրայէլի բոլոր ծերերը եկան թագավորի մօտը Քեբրոն, և Դավիթ թագավորը նորանց հետ դաշինք դրեց Քեբրոնում Տիրոջ առաջին, և նորանք Դավիթին թագավոր օծեցին Իսրայէլի վրա:

I. Առաջին անգամ Դավիթի օծությունը Բեթլեհեմում էր: (Հացի տուն)

The first time David was anointed was in Bethlehem. (House of Bread)

1 Թագ. 16:13 - 13 Եւ Սամուէլը յուղի եղջյուրն առավ, և օծեց Դավիթին իր եղբայրների մէջ. Եւ այն օրից հետո Տիրոջ Հոգին եկավ Դավիթի վրա. Եւ Սամուէլը վեր կացավ գնաց Ռամա:

1. **Bethlehem** – **Բեթլեհէմ:** Այստեղ Դավիթը ստացավ իր նախնական կոչումը որպէս Իսրայէլի թագավոր. պատանեական տարիք:

...քնար նվագել գիտի. Եւ քաջ, զօրավոր, պատերազմող, հարտասան, և գեղեցիկ տեսքով մարդ է. Եւ **Տէրը նորա հետ է:** (ավելացնենք որ նա նաև **ԼԱՎ ԸՆԿԵՐ է**)

2. Gibeah — Գաբաան - (1 Թագ. 17-20; երիտասարդ տարիքը: մոտովորապես 18-23 տարեկան):

- Այս ժամանակաշրջանում Դավիթի ինքնությունը փորձվեց եւ ամրապնդվեց թե **գովասանքի** և թե **հաջողության** ժամանակ:

3. Adullam - Ոդոդմի քարայրը (1 Թագ. 21-31; հասուն տարիքը: մոտովորապես 23-30 տարեկան):

Այս շրջանում Դավիթի ինքնությունը փորձվեց եւ ամրապնդվեց եւ զորացավ **նեղությունների** ժամանակ:

- **Երբ մենք ստացանք այս ՕԾՈՒԹՅՈՒՆԸ: Եւ Ո՞ւմ կողմից**

Ո՞րտեղից և ո՞վ օժեց Քրիստոսին - Աստված օժեց Քրիստոսին ուրախության յուզով:

Գործ. **10:38 - 38** Այն Հիսուսին որ Նազարեթիցն է, թէ ինչպէս նորան Աստուած Սուրբ Հոգով և զորութիւնով օժեց. Որ ման եկաւ բարի անելով և սատանայիցը բոլոր հարստահարուածներին բժշկելով. Որովհետև Աստուած նորա հետ էր:

Ղուկ. **4:18 - 18** Տիրոջ Հոգին ինձ վրա է. որի համար էլ օժեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու, սրտով կոտորուածներին բժշկելու:

Ի՞նչպես, երբ և ո՞նց:

2 Կոր. 1:21-22 - 21 Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և մեզ օծողը Աստուած է. 22 Որ մեզ կնքեց էլ. և Հոգու գրավը դրեց մեր սրտերի մէջ:

Եփ. 1:13-14 - 13 Որ նորանում և դուք հուսացաք, երբոր հշմարտության խօսքը լսեցիք՝ ձեր փրկության ավետարանը, որին էլ **երբոր հավատացիք՝ կնքուեցիք խոստացուած Սուրբ Հոգով:** 14 Որ մեր ժառանգության գրավն է, մինչև ստացուածքի փրկությունը, նորա փառաց գովասանքի համար: (երբ կատարելապէս կը տիրանանք փրկությանը՝ ի գովություն նրա փառքի:)

1 Հով. 2:20,27 - 20 Եւ դուք օծություն ունեք այն սուրբից և ամեն բան գիտէք: 27 Եւ այն օծությունը, որ դուք նորանից ընդունեցիք բնակվում է ձեզանում. և դուք պէտք չ'ունեք որ մէկը սովորեցնի ձեզ. այլ ինչպէս այն օծությունը սովորեցնում է ձեզ ամեն բանի համար, հշմարիտ է և սուտ չէ. և ինչպէս նա սովորեցրեց ձեզ, մնացեք նրա մեջ:

Ձեր ծառայության դաշտը կարող է փոխվել, բայց ոչ ձեր կոչումը:

II. Երկրորդ անգամ Դավիթի օծությունը Քեբրոնում էր: Համայնք, Միություն
The second time David was anointed was in Hebron. Community, Alliance

2 Թագ. 2:4 – Եկան Հրէաստանի մարդիկ և այնտեղ Դավիթին Հուդայի տան վրա թագավոր օծեցին: 11 Քեբրոնում, Հուդայի երկրի վրա Դավիթը թագավորեց եօթը տարի վեց ամիս:

4. Hebron – Հեբրոնում (2 Թագ. 2-5; մեծահասակ տարիքը – 30-37):

- Այս ժամանակաշրջանում Դավիթը ստացավ իր ժառանգության մի մասը.
- 2 Տիմ. 1:9 - Որ փրկեց մեզ, և սուրբ կոչումով կանչեց.

III. Երրորդ անգամ Դավիթի օծությունը Երուսաղեմում էր: (Խաղաղություն)
The third time David was anointed was in Jerusalem. (Peace)

2 Թագ. 5:1-3 - 1 Եւ Իսրայէլի բոլոր ցեղերը եկան Քեբրոն Դավիթի մօտ և ասեցին թէ Ահա մենք քո ոսկորը և քո մարմինն ենք: 2 Դեռ սորանից առաջ երբոր Սավուղը մեզ վրա թագավոր էր, դու էիր Իսրայէլի դուրս հանողը և ներս բերողը. Եւ Տէրը քեզ ասեց. Դու հովուես իմ ժողովուրդ Իսրայէլին, և դու լինես իշխան Իսրայէլի վրա: 3 Եւ Իսրայէլի բոլոր ծերերը եկան թագավորի մօտը Քեբրոն, և Դավիթ թագավորը նորանց հետ դաշինք դրավ Քեբրոնում Տիրոջ առաջին, և նորանք Դավիթին թագավոր օծեցին Իսրայէլի վրա:

5. Jerusalem/Zion – Երուսաղեմ/Սիոն (2 Թագ. 6-24; միջին տարիքը և ծերություն – 37-70 տարեկան):

- Այս ժամանակաշրջանում Դավիթի ինքնությունը փորձարկվեց, երբ նրա կյանքում կատարվեցին բոլոր երկրային խոստումները եւ նա բարգավաճեց.
- 2 Կոր. 5:18 - 18 Բայց այն ամենն Աստուածանից է. որ մեզ իր հետ հաշտեցրեց Հիսուս Քրիստոսի ձեռով. և մեզ հաշտության պաշտօնը տվեց:

Ամփոփում

- Ինչպէս եք գնահատում Դավթի համբերությունը այն մարգարեության վերաբերյալ, թե նա թագավոր կդառնար:
- Ինչպէս կգնահատեք Ձեր սեփական համբերությունը, այն բանի վերաբերյալ, որ հավատում եք Աստված խոստացել է Ձեզ: